

1. 2015 թվականի դեկտեմբերի 24-ին «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի միջև կնքված N4/15-CIF դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում վճարովի ծառայությունների մատուցման աշխատանքների նկարագիր

**Ծրագրի անվանումը.** «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)

**Ծրագրի հիմնական նպատակը** «Բիզնեսի կառավարում» («Գործարար վարչարարություն (կառավարում)»)<sup>1</sup> մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպումն է հեռավար ձևաչափով, որի արդյունքում կտրվեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմներ:

**ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ (ԽՈՐՀՐԴԱՏՈՒ 2 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՄԱՐ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ**

Ծրագրի իրականացման տեխնիկական սպասարկման գծով Խորհրդատու 1-ը պետք է իրականացնի ստորև նշված բոլոր աշխատանքները ՀՀ պետական կառավարման ակադեմիայում:

Ծրագրի իրականացման տեխնիկական սպասարկման գծով Խորհրդատուից ակնկալվում է Ծրագրի ղեկավարի ուղղակի վերահսկողության ներքո կատարել հետևյալը.

1. Ծրագրի ապահովման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների (սարքեր, սարքավորումներ) տեխնիկական բնութագրերի վերաբերյալ Խորհրդատվություն
2. հեռավար ուսուցման հարթակի տեխնիկական և ծրագրային վերազինման, ընթացիկ սպասարկման ուղղությամբ Խորհրդատվության տրամադրում,
3. սեմինարների անցկացում դասախոսների համար՝ հեռավար ուսուցման հարթակից օգտվելու, տեխնիկական պայմանների, նյութերի տեղադրման և կիրարկման վերաբերյալ Խորհրդատվության տրամադրում,
4. հեռավար ուսուցման հարթակի կիրարկման հետ կապված Խորհրդատվության տրամադրում,
5. հեռավար ուսուցման հարթակի անվտանգության ապահովման, տվյալների արխիվացման և պահպանման ուղղությամբ Խորհրդատվության տրամադրում,
6. Ծրագրով ձեռք բերված ապրանքագրի համարանշման, ձեռք բերված ապրանքների գույքագրման աշխատանքների կազմակերպում,
7. ստացված ապրանքների որակի կամ երաշխիքային սպասարկման վերաբերյալ Խորհրդատվություն,
8. անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական միջոցների ապահովում,

<sup>1</sup> 041301.04.7 Գործարար վարչարարություն (կառավարում)՝ համաձայն 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» N 647-Ա/Ք հրամանի:

9. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ապահովում:

10. մասնակցություն Ծրագրով նախատեսված քննարկումներին և աջակցություն Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծմանը:

11. կատարված աշխատանքների վերաբերյալ փուլային հաշվետվության ներկայացում (մեկ փուլի տևողությունը մեկ ամիս է):

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

### **1.ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

- բարձրագույն կրթություն (ցանկալի է նաև գիտական աստիճան)
  - առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում
    - Windows Server, Linux օպերացիոն համակարգերի իմացություն
    - հայերենի, ռուսերենի, ինչպես նաև մասնագիտական անգլերենի գերազանց իմացություն
- 

25 միավոր

### **2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ**

- դիտարկման, ուսումնասիրության, վերլուծության և գնահատման փորձառություն
  - թիմային աշխատանքի, արդյունավետ հաղորդակցման և համագործակցելու կարողություն/փորձառություն
- 

15 միավոր

### **3.ՀԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ**

- հեռավար կրթության ուսումնական գործընթացի իմացություն
  - բուհական էլեկտրոնային կրթական համակարգերի ներդրման և շահագործման փորձ
    - ցանցային համակարգերի կառավարման և շահագործման փորձ
    - համակարգչային և ցանցային սարքավորումների հետ աշխատանքի փորձ
    - առաջարկությունների կազմման և ներկայացման փորձ
- 

60 միավոր

**ՆԱԽԱՀԱՇԻՎ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ**

հուլիս 2016- նոյեմբեր 2017